ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի ապրիլի 17-ին ժամը 11:00-ին Արարատի մարզի Արարատ քաղաքի Շահումյան 34 հասցեում գտնվող Արարատի համայնքապետարանում տեղի կունենա Արարատ համայնքի վարչական տարածքում գտնվող,համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ վաճառք: Աճուրդի է ներկայացվում.

1.ք.Արարատ Ա.Իսահակյան 23/1 հասցեում գտնվող 03-002-0010-0101 կադաստրային ծածկագիրը կրող 0.000091 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս,մեկնարկային գին՝30000 ՀՀ դրամ:

2. ք.Արարատ Խ.Աբովյան 1/19 հասցեում գտնվող 03-002-0002-0356 կադաստրային ծածկագիրը կրող 0.00588 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս, մեկնարկային գին՝630000 ՀՀ դրամ:

3. ք.Արարատ Աղբյուր Սերոբի 12/2 հասցեում գտնվող 03-002-0019-0125 կադաստրային ծածկագիրը կրող 0.00274 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս, մեկնարկային գին՝900000 ՀՀ դրամ:

4. Ավշար բնակավայրի վարչական տարածքում գտնվող 03-013-0909-0004 կադաստրային ծածկագիրը կրող 0.21256 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատես, մեկնարկային գին՝1320000 ՀՀ դրամ:

5. Պարույր Սևակ բնակավայրի 1-ին փողոց 2/2 հասցեում գտնվող 03-078-0002-0012 կադաստրային ծածկագիրը կրող 0.0495 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս, մեկնարկային գին՝300000 ՀՀ դրամ:

6.Պարույր Սևակ բնակավայրի 4-րդ փողոց 24/2 հասցեում գտնվող 03-078-0009-0064 կադաստրային ծածկագիրը կրող 0.10649 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս, մեկնարկային գին՝600000 ՀՀ դրամ:

Նշված հողատարածքների համար սահմանված է նախավճար՝ մեկնարկային գնի 50%-ը,մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ, մրցույթային քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:

Աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերն են՝ մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն:

Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ:

Տվյալ հողամասերը ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում,ինչպես նաև ընդգրկված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,հողամասերի օգտագործումը չի առաջացնում սերվիտուտ:

Աճուրդի պայմաններին ծանոթանալու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արարատի համայնքապետարան՝ աճուրդային հանձնաժողովին:

Արարատի համայնքապետարան /հեռ. 060 88 55 55 /